Վարկային հայտի բավարարման գործոններ

- Հաճախորդի կողմից ներկայացվել են անհրաժեշտ փաստաթղթերն ամբողջությամբ:
- Վարկային հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո, հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ ԱՔՌԱ վարկային բյուրո կատարված հարցման արդյունքում գործող պարտավորությունների ռիսկի դասը ստանդարտ, վերջին 24 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի առավելագույն քանակ՝ 45 օր և վերջին 12 ամիսների ընթացքում ժամկետանց օրերի առավելագույն քանակ՝ մինչև 30 օր:
- Հաճախորդի աշխատավայրի և գրանցված աշխատավարձի չափի վերաբերյալ տվյալները գրանցված են «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամում:
- Հաճախորդի դրական վարկային պատմության կամ վարկային պատմության բացակայության դեպքում «էլեկտրոնային «ՍՔՈՐԻՆԳ» համակարգով վարկունակության գնահատման արդյունքում հաճախորդի վարկունակության վերաբերյալ եզրակացությունը եղել է դրական:
- Սույն վարկատեսակի տրամադրման համար սահմանված պայմաններին բավարարելու դեպքում:

Վարկային հայտի մերժման գործոններ

- Հաճախորդի կողմից չեն ներկայացվել վարկ ստանալու համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը:
- Վարկային հայտը և անհրաժեշտ փաստաթղթերը ներկայացնելուց հետո, հաճախորդի վարկային պատմության վերաբերյալ ԱՔՌԱ վարկային բյուրո կատարված հարցման արդյունքում չի բավարարվել վարկային պատմությանը վերաբերող պահանջը:
- Հայցվող հայտի մերժման դեպքում հայցվող հայտը բավարարելու փորձերի քանակը գերազանցել է երկուսը՝ 5 աշխատանքային օրվա ընթացքում:
- Մեկ տարվա ընթացքում սույն վարկատեսակով հաստատված վարկերի քանակը գերազանցում է երկուսը:
- Հաճախորդի աշխատավայրի և գրանցված աշխատավարձի չափի վերաբերյալ տվյալները գրանցված չեն «Նորք» սոցիալական ծառայությունների տեխնոլոգիական և իրազեկման կենտրոն հիմնադրամում:
- Հաճախորդի դրական վարկային պատմության կամ վարկային պատմության բացակայության դեպքում «էլեկտրոնային «ՍՔՈՐԻՆԳ» համակարգով վարկունակության գնահատման

արդյունքում հաճախորդի վարկունակության վերաբերյալ եզրակացությունը եղել է բացասական:

- Վարկավորման գործընթացի արդյունքում հայտնի են դարձել հաճախորդի վերաբերյալ այնպիսի տեղեկություն, որը կասկածի տակ է դնում հաճախորդի վճարունակությունը:
- Սույն վարկատեսակի տրամադրման համար սահմանված պայմաններին չբավարարելու դեպքում: